

№ 1 (93)

ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՐԱՊԱՏՈՅԵԼԻ

№ 1 (93)

Գ Բ Ո Ւ Մ Բ Ո Ն


ԳՐ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Դ Մ Բ Ո Ղ Ը

Բ. ՏԵՊԵՐԿՆԵՐՈՒՆ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՀՈՂԴՈՒՆՈՒՄՈՒՄԻ

ՅԵՐԵՎԱՆ — 1980



№ 1 (93)

ԳՐԱԴԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Գ Բ Ն Գ Ն Բ Ն

№ 1 (93)


619: 616.959.2

ԳՐ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

A $\frac{1}{4295}$

Դ Ա Բ Ա Ղ Ը

Բ. ՅԱԿՈԲՅԱՆ



ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ

ՅԵՐԵՎԱՆ—1980

ՀԱՅՊԱՆԻԴՐԱՅ
Դրանցովոր 5419 (բ)
Պատվ. № 3391
Տիբուն 2000

ԴԱԲԱՂԸ

Դարապը վարակիչ հիվանդութիւնն է, վորից անասունները թեև մեծ մասամբ առողջանում են, բայց այդ հիվանդութիւնը մեծ վրնասներ է հասցնում գյուղատնտեսութեան:

Թվենք այդ վնասները. ա) դարապը սաստիկ վարակիչ է. բաժական է, վոր մի անասուն հիվանդանա, կարճ ժամանակամիջոցում վարակվում է ամբողջ հոտը:

բ) Հիվանդացած անասունները չափազանց նիհարում են և հիվանդութիւնից հետո շատ գանդաղ կազդուրվում:

գ) Կան կովերը 2-3 շաբաթ, յերբեմն և ուժիկ յեկար ժամանակ կաթ չեն տալիս:

դ) Լծկան յեղները նույնչափ ժամանակով կորցնում են իրենց աշխատունակութիւնը:

ե) Հորթերը հիվանդութիւնից հետո վատ են աճում և մեծ մասամբ մնում են մշտապես թույլ:

զ) Յերբեմն դարապը շատ ուժեղ է լինում, վորից 100-ից 4-5 գլուխ սատկում են:

Յեթե հաշվի առնենք միմիայն հիվանդութեան ընթացքում սպաւատած կաթի արժեքը, կտեսնենք, թե ինչ մեծ վնասներ է հասնում դարապից:

Բացի դրանից, դաբաղի համաճարակի ժամանակ, նրա վարակիչ լինելու հետեանքով, ճանապարհները և շուկաները փակվում են, մի շրջանից ուրիշը անասունների տեղափոխությունն խորգելվում է, անասունների վաճառքը դադարում է:

Յեթե այս բոլոր հանդամանքները հաշվի առնենք և փողի վերածենք, կատանանք մի մեծ գումարի վնաս:

Հայաստանի սահմաններում դաբաղը վերջին տարիներում, մանավանդ դարնանը և մատը, շատ մեծ ծախսը և ստանում:

Գյուղացիությունը տեսնելով, վոր դաբաղից քիչ անասուն է բառկում, այդ համաճարակի վրա մատների արանքով և նայում և հաշվում է «անվնաս» հիվանդություն:

Սա շատ մեծ սխալ է, վորից առաջիկայում պետք է խուսափել, վորպեսզի մեր յերկրի անասնապահությունը չտուժի, և անասունների վորակը բարձրանա:

Միշտ պետք է հիշել, վոր անասուններին հիվանդանալուց պաշտպանելն ավելի հեշտ է, քան հիվանդ անասունին բժշկելը:

Դրա համար ել տմեն մի գյուղացի, մանավանդ կոլտնտեսության յուրաքանչյուր անդամ պետք է գիտենա, թե ինչ է դաբաղը, վորտեղից է առաջ գալիս, ինչպես է տարածվում, ինչ միջոցներով կարելի յե պաշտպան-

վել և անասունների հիվանդանալու դեպքում
ինչ պետք և ձեռնարկել բժշկության համար:

Գարապր, ուրիշ վարակիչ հիվանդու-
թյունների պես, տարածվում և միկրոբներով
(մանրէներով): Վարակը դանվում և հիվանդ
կենդանու թքի (լորձունքի) մեջ: Հիվանդ
կենդանին արածելիս թքոտում և արտար, իսկ
մյուս առողջ կենդանիները արածելով նույն
տեղում՝ թքոտած արտաի միջոցով հեշտու-
թյամբ վարակվում են:

Այդպիսով վարակը, մանելով կենդանու
մարմնի մեջ, առաջացնում և հիվանդություն:
Վարակվելուց հետո հիվանդությունն շնմի-
ջապես չի սկսվում, այլ մի քանի օր անց-
նելուց հետո (2-10 օր): Այդ ժամանակամիջո-
ցը, վոր տեղում և վարակվելուց մինչև հիվան-
դության նշանների յերեւալը, կոչվում և «թա-
ղուն շրջան» կամ «խմորման շրջան»: Խմոր-
ման շրջանը լավ հասկանալու համար բերենք
մի օրինակ:

Գյուղացու մեկը, ուրիշ գյուղից մի առողջ
կով գնելով, բերում և տուն և քշում և նախիր:
Մի շաբաթ անցնելուց հետո կովը հիվանդա-
նում և դաբաղով և վարակում և ամբողջ նա-
խիրը: Յեթե հարցնենք, թե վորտեղից առաջ
յեկավ դաբաղը, թե կովի տերը և թե հարեան-
ները պիտի հաստատեն և պնդեն, թե հիվան-
դությունն սկսվեց ինքն իրան, վորովհետեւ ի-
րանք տեսել են, վոր նոր բերված կովն առողջ
և յեղել: Գյուղացի պառավներն ել այս դեպ-

քում պիտի փափսան, թի վատ քամի յե փչել
դյուղի վրա, իսկ ուրիշներն եւ պիտի ասեն,
թի սա տառածու պատիժ ե:

Գրանից վո՞րն ե իսկական պատճառը: Ի-
հարկե, վոչ մեկն եւ: Բայց պատճառը չատ
պարզ ե: Գյուղացին զնալով ուրիշ դյուղ, ա-
ռանց հետաքրքրվելու, թե դյուղը ապահով ե
հիվանդություններից, թե վոչ, առել ե արդեն
վարակված կով, վորը իր տանը մի շարաթ
թեկ տողջ ե յերեացել իրան, բայց իրոք յե-
ղել ե հիվանդության խմորման շրջանում ե
հիվանդանալով վարակել ե տմբողջ նախիրը:

Այդ պատճառով ոտար տեղից բնրած տ-
նասունին յերբեք չպետք ե անմիջապես նախիր
քշել:

Այդպիսով ե, վոր վոչ միայն դարպղը,
այլ ե բոլոր ուրիշ հիվանդությունները մար-
դիկ մի տեղից մյուսն են տեղափոխում իրանք
ե հետո հազար ու մի սխալ յենթադրություն-
ներ ածում:

Ոտար տեղից բերված անասունը միշտ
պետք ե առանձնացնել զոնե 10 որ. յեթե այդ
ժամանակամիջոցում անասունը հիվանդանա
կամ սատկի, նա չի կարող վարակել ուրիշնե-
րին, իսկ յեթե առողջ մնա, նոր կարելի յե քշել
նախիր ե ապահով լինել, վոր նոր անասունը
հիվանդություն չի բերել իր հետ:

Սա անասնապահության ամենահիմնա-
կան որենքն ե, վորի խախտումից ե, վոր դյու-

դասնախոսութիւնը լինծամեծ վնասներ ե կը-
րում :

Յեկէ՛ այս իմաստով դյուզխորհուրդները
պարտադիր վորոշում կայացնեն, և դյուզա-
ցիք անշեղ կիրառեն այդ տարրական որենքը,
մեծամեծ չարիքներից և վնասներից ազատով
կմնան :

Դարտուով հիվանդանում են դլխավորա-
պես խոշոր յեղջուրավոր անատունները, ապա
վոչխարներն ու այծերը և խոզերը : Հազվա-
դյուռ դեպքերում հիվանդանում են նաեւ մյուս
ընտանի կենդանիներն ու մարդը :

Հիվանդության սկզբում կենդանու առ-
քութիւնը բարձրանում է, դլխիկոր կանդնած
է մնում, և բերնից հոսում է թանձր, թեւի
պես լորձունք :

Յերկրորդ կամ յերրորդ ուր յնգերքի,
լեզվի և չրթունքի ներսի կողմում յերեւում է
կարմրություն և տեղ-տեղ պզտոր հեղուկով
լցված բշտիկներ, վորոնք մի յերկու որից
պատալում են, թոյնեւով իրանց տեղում մեր-
կացած, ցավոտ վերքեր :

Հասկանալի յէ, վոր հիվանդության մի-
ջոցին կենդանին զժվարությամբ և ուսում,
մանաւանդ կոչա կերը, վորը դիպչելով բերնի
վերքերին, սոստիկ ցավ և պատճառում : Բայց
միևնույն ժամանակ հիվանդը շատ հաճախ
և հաճույքով խմում է ջուր, վորը վողողելով
բերանը, մաքրում է կերի մնացորդներից և
թարմացնում է վերքերը :

Ուրիշ նշաններէց աչքի յե ընկնում կաթիլ պակասելը, իսկ յերբեմն՝ իսպառ կարգելը: Հիվանդ կովի կաթի զույն գեղնում է, թանձրանում է, շուտ է թթվում և դառնահամ է լինում: Հիվանդ կովի հում կաթը վարակիչ է մարդու համար:

Յեթե կենդանին միմիայն բերնից ե հիվանդանում, կանոնավոր խմելուց և կերակրելուց հետո, մի յերկու շաբթում ասողջանում է: Բայց լինում են դեպքեր, յերբ հիվանդությունը անցնում է վտանգերին:

Կծղակների արանքում դուրս են գալիս բշտիկներ և սլառավելով դառնում են վերքեր: Այդ վերքերի մեջ լցվում է կեղտ, արք, վաշի, ցեխ և այլն և գրգռելով՝ ուռցնում և բորբոքում է վերքերը: Կենդանին դժվարությամբ և տեղափոխվում տեղից տեղ, իսկ ծանր դեպքերում մնում է պառկած:

Նույնպիսի ցավոտ վերքեր բացվում են յերբեմն կովերի ծծերի սլառակներ վրա:

Յերբ հիվանդությունը տարածվում է բերնի, կծղակների և ծծի պտուկների վրա միտամանակ, կենդանու վիճակը շատ ծանր է լինում և պահանջում է ուշադիր խնամք և համապատասխան սնունդ, վարից մեծ չափով թեթեւանում է հիվանդության ընթացքը և նպաստում է բժշկությանը:

Հիվանդ կենդանիներին անհրաժեշտ է չոր և մաքուր տեղ: Պետք է հոգալ, վար կենդանու մասների տակ փափուկ փալածք լինի: Կոշտ

կերից (չոր խոտ, դարման) պետք է խուսա-
փել, վորովհետև, ինչպես ասացինք, չոր կերը
ցամակցնում է բերնի վերքերը: Ոգտակար է հի-
վանդ կենդանուն կերակրել կանաչ, հյութալի
տրոստով կամ դրա չլինելու դեպքում չոր խոտը
պետք է խաշել յետացրած ջրով, վորից չոր
խոտը թե փափկում է և թե հյութալի յե դառ-
նում:

Հնարավորություն յեղած դեպքում ցան-
կալի յե կերակրել ջրի մեջ խառնած ալյուրով
կամ թեփով: Կերակրին լավ է քիչ աղ խառնել:

Խմելու ջուրը հիվանդի համար պետք է
անպակաս լինի. մի վեղրո ջրին 1-2 գլալ քա-
յախ խառնելը շատ ոգտակար է:

Մաքրությունը, ուշադիր խնամքը և լավ
սնունդը հիվանդ անասունի բժշկության լա-
վադույն պայմաններն են:

Անասունի վտուքերը հիվանդությանից
պաշտպանելու համար կճղակները պետք է քը-
սել ձյութ (ղաթրան)՝ կտավատի կամ կանեփի
յուղով համատար խառնած:

Յեթե անասունը կճղակներից արդեն հի-
վանդացել է, պետք է կճղակների վերքերը
մաքրության մեջ պահել և յերբեմն ցանել շի-
բի հետ խառնած փայտածուխի փոշի:

Ստինքների պտուկների վերքերը պետք է
յեփած դու ջրով լվանալ և հաճախակի կթել:

Չպետք է մոռանալ, վոր դաբաղը սաստիկ
վարակիչ է: Վարակը հեշտությամբ կարող է
դիպչել մարդկանց ձեռներին, շորերին և կո-

չիկներին: Հիվանդ անասուններին խնամող-
ները պետք է հաճախ ձեռները լվանան սապո-
նով, յեթե հնարավոր է, նույնիսկ փոխեն շո-
րերը և կոշիկները:

Այդ պատճառով բժշկները հիվանդին մո-
տենալիս հագնում են խալաթ, իսկ աշխատե-
լուց հետո հանում են:

Յեթե շորերը և կոշիկները փոխելու հնա-
րավորություն չի լինում, պետք է սրահել ախ-
տահանիչ դեղերով, վրը պետք է ստանալ ա-
նասնաբուժից:

Այս անհրաժեշտ գլուխթյունը չկիրա-
ռելու դեպքում վարակը տարածում են իրենք
գյուղացիները:

Դարադի դեմ պայքարելու հիմնական
պայմանն է վարակի տարածվելու առաջն առ-
նելը:

Հարևան գյուղում դարադի դեպքերը յե-
րևալու դեպքում անհրաժեշտ է արգելել ոտաք
տեղերի անասուններին գյուղ մտնելը:

Ձպետք է թողնել, վոր ոտաք քոչվորներն
իրենց անասուններով գյուղի միջով անցնեն.
անհրաժեշտ է գյուղից դուրս դարադի ճանա-
պարհներ ունենալ:

Պետք է պատվիրել նախապանին, վոր
գյուղի նախիրը չխառնի հարևան նախիրի
հետ և չթողնի հարևան արոտավայրում արա-
ծելու:

Յեթե հարևան գյուղում վարակիչ հի-

վանդուկթյուն յերևա, լսով ե ավելորդ յերթե-
վեկությունը սահմանափակել:

Հարէ՛տնիդ անասունը հիվանդանալու
դեպքում մի՛ դնար «թամաշա» անելու, վո-
րովհետեւ կարող ես վարակը տուն բերել:

Գյուղում դարաւոր յերևալու դեպքում ա-
նասնատէրերի տաճին պարտականությունն ե
առանձնացնել հիվանդ կենդանիներին, նախիր
չբռնել ե անմիջապէս հայտնել անասնաբուժին,
ե նրա ցուցմունքներով ձեռնարկել անհրա-
ժեշտ միջոցները:

Յեթե առաջին հիվանդներն սկզբից անմի-
ջապէս առանձնացած լինեն ե պաշտպանու-
թյան միջոցներ ձեռք տունված, շատ անգամ
հաջողվում ե դարաւոր դարդացման առաջն տու-
նել:

Նախիրի մեջ հիվանդությունը տարածվե-
լու դեպքում ձեռնառու յե ամբողջ նա-
խիրը պատվաստել (վարակել) միանգամից:
Այդ միջոցի առաւելությունը հասկանալի կը-
լինի, յեթե հիշենք, վոր միանգամից վարակ-
ված նախիրը միաժամանակ կհիվանդանա, ե
2-3 շաբաթվա ընթացքում համաճարակը կան-
ցրնի. այնինչ հիվանդության բնական ընթաց-
քի ժամանակ համաճարակը կարող ե տեւել մի-
ջանի ամիսներ:


Բացի դրանից, պատվաստված անասուն-
ները ավելի թեթեւ են հիվանդանում, ե մեծ
մասամբ միմիայն բերնից, ե չուտ ել առող-
ջանում են:

Պատվաստումներ կարող ե անել միայն անասնաբուժը:

Դարաղից ստանալիք անասունների դիակը պետք ե թաղել անասնադերեզմանոցում խորը փոսի մեջ, վոր շները չպատառոտեն դիակը ե վարակը չտարածեն:

Դարաղի դեմ պայքարելու միջոցները նախատեսված են անասնաբուժական կանոնադրքի մեջ. այդ միջոցների իրադրծումը բավականին դժվարություններ են պատճառում գյուղացիությանը, ե նա շատ անգամ անդիտակցաբար խուսափում ե անասնաբուժական պահանջները կատարելուց, մոռանալով, վոր այդ որենքները սահմանված են գյուղացու անուեության շահերը պաշտպանելու համար:

Միմիայն անասնաբուժի վրա հույս դնելով անկարելի յե դարաղից ազատվել. մոռանալ անասնաբուժի հետ պետք ե սերտ կապ հաստատել ե անհրաժեշտ դեպքում դիմել նրան ե ոգտվել նրա ցուցմունքներով ե խորհուրդներով, բայց դարաղի դեմ պայքարը պիտի կադմակեցով ինքը հասարակությունը ե ակտիվ մասնակցությամբ հաղթահարի անտեսական շարիքը:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039174

၄၂၆၆ ၃ ၅၈၇. (၆/၈ မိမိမိမိ)

A ၂
4255